

ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2025 թ.-ից

Տեղի են ունեցել հարկային օրենսգրքի փոփոխություններ, որոնց արդյունքում՝

1. Բարձրացել են շրջանառության հարկի դրույթաչափերը,
2. Ավելացել է ծախսերի միջոցով հարկի նվազեցման հնարավորությունը որոշ տեսակների համար,
3. Շրջանառության հարկ վճարողները այլևս պարտավոր են հաշվառել ապրանքային շարժը:

Որոշ դեպքերում և ոլորտներում առկա են **շրջանառության հարկի ֆիքսված դրույթաչափեր**՝ անկախ կատարված ծախսերից, հետևաբար հարկի նվազեցման հնարավորություն չկա, իսկ մի քանի ոլորտներում ու դեպքերում, փաստաթղթավորած որոշ ծախսերից կախված, **հնարավոր է հարկի նվազեցում**:

Եթե բիզնեսավարման ընթացքում առկա են ծախսեր և այդ ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, ապա վճարման ենթակա **հարկի նվազեցման հնարավորություն կա**: **Ներկայացնում ենք այն ծախսերը, որոնք կարող են նվազեցվել շրջանառության հարկի գումարից**:

Շրջանառության հարկի գումարից նվազեցվող ծախսեր են համարվում տվյալ հաշվետու ժամանակաշրջանում կատարված՝

- ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսերը
 - այն է՝ հոլմքի, նյութերի ծախսերը
 - արտադրական գործընթացներում, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման գործընթացներում ներգրավված անձնակազմի աշխատավարձի ծախսերը
- առևտրական (առք ու վաճառքի) գործունեության առարկա հանդիսացող ապրանքների սկզբնական արժեքը
- իրացման ծախսերը՝
 - ապրանքների փաթեթավորման
 - պահպանման
 - բեռնման
 - տեղափոխման
 - բեռնաթափման
 - ուղեկցման
 - գովազդի և մարքեթինգի ծախսերը
- Վարչական ծախսերը՝
 - տնօրենի և այլ վարչական աշխատողների աշխատավարձ
 - տարածքի վարձակալություն
 - գրասենյակային և փոստային ծախսեր

Ընդ որում, **նվազեցվող ծախս չեն համարվում**.

- հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերելու և մաշվածության ծախսերը
- ինչպես նաև՝ այդ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վրա կատարվող ծախսերը
- անհատույց ստացված ակտիվների, աշխատանքների և ծառայությունների գծով ծախսերը
- գործուղման ծախսերը
- ներկայացուցչական ծախսերը

Շրջանառության հարկի գումարից ծախսերի գծով չնվազեցված մասը, (այսինքն եթե ծախսերը այնքան շատ են եղել, որ հարկվել է նվազագույն դրույթաչափով), տեղափոխվում է հաջորդ եռամսյակ և նվազեցվում հաջորդ եռամսյակի հարկերից:

	Իրադարձություն	Դրույթաչափը (%)	Նվազեցման առավելագույն դրույթաչափը (%)	Նվազագույն դրույթաչափը (%)
1	Առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտներ, բացառությամբ սույն աղյուսակի 2-րդ և 9-րդ կետերով նախատեսված գործունեության տեսակներից ստացվող եկամուտների	10	9.5	1
2	Կառավարության սահմանած ցանկում ներառված երկրորդային հոլմքի առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտներ	5	-	-
3	Խմբագրությունների կողմից թերթերի օտարումից եկամուտներ	1.5	-	-
4	Արտադրական գործունեությունից ստացվող եկամուտներ	7	5	3
5	Վարձակալական վճար, տոկոս, ռոյալթի	10	-	-
6	Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտներ	12	9	3.5
7	Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն ներկայացրած շրջանառության հարկ վճարողների կողմից Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում չներառվող՝ այլ ակտիվների օտարումից, ինչպես նաև այլ գործունեությունից ստացվող եկամուտներ	20	-	-
8	Կառավարության սահմանած բարձր տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակների ցանկում ներառված գործունեության տեսակներից ստացվող եկամուտներ	1		
9	Այլ ակտիվների, այդ թվում՝ անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտներ	10	-	-
10	Այլ գործունեությունից ստացվող եկամուտներ	10	6	4.5

Առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն

Օրինակ. Կազմակերպությունը զբաղվում է տնտեսական ապրանքների առևտրով (առք և վաճառքով): Եռամսյակի ընթացքում տեղական շուկայից վերավաճառքի նպատակով գնել էք 3.000.000 դրամի, իսկ Դուբայից ներմուծել էք 10.000.000 դրամի համարժեք տնտեսական ապրանքներ: Դուբայ մեկնելու գործուղման ծախսերը կազմել են 1.000.000 դրամ: Եռամսյակի ընթացքում տնտեսական ապրանքների վաճառքից ստացված գումարը կազմել է 15.000.000 դրամ:

Այսպիսով, հաշվի առնելով, որ առևտրային գործունեության համար նախատեսված է 10% շրջանառության հարկի դրույթաչափ, այսինքն՝ $15.000.000 \times 10\% = 1.500.000$: Այս գումարը հնարավոր է նվազեցնել ՀՀ ներմուծված ապրանքների մասով ծախսերի (10.000.000 դրամ) և ՀՀ-ում ձեռք բերված ապրանքների ծախսերի (3.000.000 դրամ), այսինքն՝ 13.000.000 դրամի 9.5%-ով, այսինքն՝ 1.235.000 դրամով:

Վճարման ենթակա շրջանառության հարկի վերջնական գումարը կկազմի $1.500.000 - 1.235.000 = 265.000$ դրամ, քանի որ 265.000 դրամը ավել է եռամսյակի շրջանառության 1%-ից ($15.000.000 \times 1\% = 150.000$):

Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն

Օրինակ. Դիտարկենք ռեստորանային բիզնեսը: Ռեստորանի վերանորոգման ծախսերը արժեքել են 5.000.000 դրամ: Եռամսյակի ընթացքում գնել եք 4.000.000 դրամի սնունդ, որով պետք է պատրաստվի խոհարարական արտադրանքը: Ձեռք ենք բերել սպասք՝ 500.000 դրամի: Ինչպես նաև՝ խոհանոցային սառնարան՝ 100.000 դրամ: Եռամսյակի ընթացքում խոհարարական արտադրանքի իրացումից ստացված հասույթը կազմել է 10.000.000 դրամ:

Քանի որ տվյալ գործունեության համար նախատեսված է 12% շրջանառության հարկի դրույթաչափ, հետևաբար $10.000.000 \times 12\% = 1.200.000$: Նվազեցման դրույթաչափը 9% է, այսինքն՝ $4.000.000 \times 9\% = 360.000$: Նշված մյուս ծախսերը չեն մասնակցում հաշվարկին: Նվազեցնելուց հետո կստացվի $1.200.000 - 360.000 = 840.000$, այս արժեքը համեմատում ենք շրջանառության 3.5%-ի հետ ($10.000.000 \times 3.5\% = 350.000$ դրամ): Քանի որ $840.000 > 350.000$ -ից, հետևաբար վճարման ենթակա շրջանառության հարկի վերջնական գումարը կկազմի 840.000 դրամ:

Արտադրական գործունեություն

Օրինակ. Դիտարկենք կահույքի արտադրությունը: Ձեռք բերված արտադրական սարքավորումները՝ 20.000.000 դրամ, սարքավորումների վերանորոգման ծախսերը կազմել են 2.000.000 դրամ, գործիքների ձեռքբերումը՝ 500.000 դրամ: Եռամսյակի ընթացքում գնել եք 4.000.000 դրամի համարժեք հումք և նյութեր (տախտակներ, մետաղե ձողեր, ներկանյութ, սոսինձ): Արտադրական գործընթացին մասնակող աշխատակիցների աշխատավարձը կազմել է 2.000.000 դրամ, տնօրենի աշխատավարձը 400.000 դրամ: Եռամսյակի շրջանառությունը կազմել է 12.000.000 դրամ:

Քանի որ տվյալ գործունեության համար շրջանառության հարկի դրույթաչափը նախատեսված է 7%, այսինքն $12.000.000 \times 7\% = 840.000$: 840.000 դրամ շրջանառության հարկի գումարը նվազեցվում է՝ հումքի գծով ծախսերի և աշխատակիցների աշխատավարձի ծախսերի 5%-ով՝ $(4.000.000 + 2.000.000 + 400.000) \times 5\% = 320.000$: Նշված մյուս ծախսերը չեն մասնակցում հաշվարկին: Նվազեցումից հետո կստանանք $840.000 - 320.000 = 520.000$: Այս արժեքը համեմատում ենք շրջանառության 3%-ի հետ ($12.000.000 \times 3\% = 360.000$ դրամ): Քանի որ $520.000 > 360.000$ -ից, հետևաբար վճարման ենթակա շրջանառության հարկի վերջնական գումարը կկազմի 520.000 դրամ:

Այլ գործունեություն

Օրինակ. Դիտարկենք մարքեթինգային ծառայությունների մատուցումը: Ձեռք է բերվել գրասենյակային գույք՝ 2.000.000 դրամ արժեքով, ստացել է գովազդային ծառայություն, գումարը կազմել է 700.000 դրամ, ծառայությունների մատուցման գործընթացներում ներգրավված անձնակազմի աշխատանքի վարձատրության ծախսերը կազմել են 1.000.000: Եռամսյակի շրջանառությունը կազմել է 4.000.000 դրամ:

Քանի որ տվյալ գործունեության համար շրջանառության հարկի դրույթաչափը նախատեսված է 10%, այսինքն կկազմի 400.000 դրամ ($4.000.000 \times 10\%$): 400.000 դրամ գումարը հնարավոր է նվազեցնել՝ ստացված գովազդային ծառայության և ծառայությունների մատուցման գործընթացներում ներգրավված անձնակազմի աշխատանքի վարձատրության ծախսերի ($700.000 + 1.000.000$) դրամի 6%-ով, այսինքն՝ $1.700.000 \times 6\% = 102.000$: Նվազեցումից հետո կստանանք $400.000 - 102.000 = 298.000$: Այս արժեքը համեմատում ենք շրջանառության 4.5%-ի հետ ($4.000.000 \times 4.5\% = 180.000$ դրամ): Քանի որ $298.000 > 180.000$ -ից, հետևաբար վճարման ենթակա շրջանառության հարկի վերջնական գումարը կկազմի 298.000 դրամ:

SS ոլորտ

Օրինակ. Դիտարկենք կազմակերպություն, որը զբաղվում է ծրագրային ապահովման մշակմամբ: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մատուցել է ծառայություն՝ 10.000.000 դրամի: Շրջանառության հարկի վերջնական գումարը կլինի 10.000.000-ի 1%-ը, այսինքն $10.000.000 \times 1\% = 100.000$, քանի որ ծախսերը չեն նվազեցնում այդ դրույթաչափը: